ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594015
Էլ. փոստ sirvard.gevorgyan@justice.am

№//29231-2024
24.07.2024թ.

«MEDIA.AM» **ԿԱՅՔԻ ԼՐԱԳՐՈՂ**
ՕՖԵԼՅԱ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ
Էլ. հասցե՝ opheliasimonyan@gmail.com

Հարգելի՛ տիկին Սիմոնյան,

Արդարադատության նախարարություն հասցեագրված Ձեր՝ 2024 թվականի հուլիսի 16-ի տեղեկություն ստանալու վերաբերյալ հարցմանն ի պատասխան՝ հայտնում ենք, որ ԱՆ ՔԿԱԳ գործակալությունը (Այսուհետ՝ Գործակալություն) արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությունում գործող գրասենյակ է, որը Հայաստանի Հանրապետության տարածքում ղեկավարում և կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործընթացը և իրականացնում է ՔԿԱԳ ոլորտը կարգավորող օրենքով սահմանված գործառույթներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք, որ ՔԿԱԳ գործակալության կողմից վիճակագրություն չի վարվում ՀՀ-ում գրանցված քաղաքացիական կացության ակտերի վերաբերյալ. փոխարենը՝ «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքով նման իրավասությամբ օժտված Կառավարությանը ենթակա մարմին է հանդիսանում Վիճակագրական կոմիտեն:

Անդրադառնալով ՔԿԱԳ գործակալության կողմից տրամադրված տեղեկությանը՝ հայտնում ենք, որ նշված տեղեկությունը ստացել ենք ԱՆ ՔԿԱԳ էլեկտրոնային կառավարման e-civil միասնական համակարգի միջոցով ոչ թե ինքնաշխատ, այլ ՔԿԱԳ գործակալության մասնագետների կողմից համապատասխան զտում իրականացնելու արդյունքում: Հաշվի առնելով հանգամանքը, որ Գործակալության կողմից վիճակագրություն չի վարվում գրանցված ակտային գրանցումների քանակի վերաբերյալ՝ հնարավոր է, որ

Գործակալության կողմից տրամադրված տեղեկությունը տարբերվի Վիճակագրական կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունից:

Գործակալության կողմից զտված տեղեկության քանակային առումով ավելի քիչ լինելը պայմանավորված է նրանով, որ 2021 թվականի մայիսի 16-ից ՔԿԱԳ ոլորտը կարգավորող նոր օրենքի ընդունմամբ տեղի է ունեցել ՔԿԱԳ տարածքային բաժինների կոդերի փոփոխություն և տեղեկության տրամադրման ժամանակ իրականացված զտման արդյունքում վերոնշյալ շեղումը դրա հետևանքն է:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X_____

ՍԻՐՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ